

ՀՀ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման
պետական նպատակային
ծրագրի թիրախ խմբերի
շրջանում ՄԻԱՎ-ի
տարածվածության
վերաբերյալ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
2023թ.



ՆՈՐ ՍԵՐՈՆԴ
NEW GENERATION



GILEAD

Creating Possible

ՆՈՐ ՍԵՐՈՆՆԴ
NEW GENERATION



Փաստաթուղթը կազմվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ-ի/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրին» ծրագրի շրջանակներում Gilead Sciences կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:
Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է վերլուծության հեղինակը, և պարտադիր չէ, որ այն արտացոլի «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի և Gilead Sciences կազմակերպության տեսակետները: Փաստաթղթի հեղինակները պատասխանատվություն չեն կրում երրորդ անձանց կողմից սույն գեկույցում ներկայացված տվյալների օգտագործման և մեկնաբանման համար:

Հեղինակ՝

**ՀՀ ԱՆ ԻՀԱԿ մոնիթորինգի և գնահատման բաժնի վարիչ
Մարիետտա Միրզոյան**

Դիզայնը՝

Լևոն Զիլինգարյանի

© «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

Զեկույցը կամ դրանից հատվածներ օգտագործելիս պարտադիր է հղում տալ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին:

Բոլոր իրավունքները պահպանված են ©NGNGO 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1	Հիմնախնդրի արդիականություն
2	Տեղեկության ստացման մեթոդներ և ընտրանք
3	ՀՀ-ում ՄԻԱՎ համաճարակի միտումները և ՄԻԱՎ/ ՁԻԱՀ իրավիճակ
4	Խոցելի խմբերի շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածության միտումներ
5	Բուժման կասկադ ԱՎԵԽ-ների շրջանում
6	ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2022-2026թթ միջոցառումների ծրագիր
7	ՀՀ-ում ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծառայությունները, ներառյալ նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելման ծառայությունները: ՄԻԱՎ-ի բուժմանն ուղղված ծառայությունները: Թիրախ խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելման և բուժման ծառայությունների միջազգային հաջողված փորձը
8	ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակի բարելավման միտված առաջարկներ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ԱՎԵԽ** - առավել վտանգի ենթարկվող խմբեր
- ԹՆՕ** - թմրամիջոցների ներարկային օգտագործող
- ԻՀԱԿ** - Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն
- ԿՍԿ** - կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կին
- ՀԿԿ** - ՄԻԱՎ-ի հետկոնտակտային կանխարգելում
- ՀՀ** - Հայաստանի Հանրապետություն
- ՀՌՎ** - հակառետրովիրուսային
- ՁԻԱՀ** - ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
- ՄԱԿ** - Միավորված ազգերի կազմակերպություն
- ՄԻԱՎ** - մարդու իմունային անբավարարության վիրուս
- ՆԿԿ** - ՄԻԱՎ-ի նախակոնտակտային կանխարգելում
- SUS** - տղամարդկանց հետ սեռական կապեր ունեցող տղամարդիկ
- ՔԿՀ** - քրեակատարողական հիմնարկ
- ԻԿՎՀ** - Ինտեգրված կենսաբանական և վարքագծային հետազոտություն
- ՏԲ** - Տուբերկուլոզ

ՀԻՄՆԱԽՆԴԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ.

- Ուսումնասիրել ՀՀ-ում ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծառայությունները, ներառյալ նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելման ծառայությունները:
- Ուսումնասիրել ՀՀ-ում ՄԻԱՎ-ի բուժմանն ուղղված ծառայությունները:
- Ուսումնասիրել ԱՎԵԽ-ների շրջանում բուժման կասկադն՝ ըստ տարիների:
- Վեր հանել ծառայությունների մատուցման գործընթացին մասնակցող և օգտվող քաղաքացիների կարիքները:
- Ուսումնասիրել թիրախ խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելման և բուժման ծառայությունների միջազգային հաջողված փորձը:
- Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնել առաջարկներ՝ ուղղված թիրախ խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելման և բուժման ծառայությունների բարելավմանը:

Ինչպես ցույց են տալիս 2014, 2016, 2018 և 2021թթ. կատարված ԻԿՎՀ հետազոտության արդյունքները, ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԱՎԵԽ-ների շրջանում բարձր է, և որոշ խմբերի շրջանում նկատվում է տարածվածության աճ: ԻՀԱԿ ՓԲԸ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ տվյալների վերլուծությունը վկայում է ՄԻԱՎ համաճարակի կայուն աճի մասին: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրերն ուղղված են ՄԻԱՎ վարակի տարածվածության նվազմանը, ԱՎԵԽ-ների շրջանում իրազեկվածության բարձրացմանը և ՄԻԱՎ-ի վաղ հայտնաբերելիության ցուցանիշի բարելավմանը: ՄԻԱՎ-ի նկատմամբ ԱՎԵԽ-ների շրջանում տրամադրվող ծառայությունների ուսումնասիրությունը և առկա խնդիրների բացահայտումը հնարավորություն կտա հնարավորինս բարելավել ծառայությունները, որոնք ավելի ներառական, ամբողջական և հասանելի կլինեն շահառուների համար:

Հետազոտության նպատակն է բացահայտել Հայաստանում ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ու բուժմանն ուղղված ծառայությունների վերաբերյալ ինֆորմացիան, ինչպես նաև դրանց համապատասխանությունը թիրախ խմբերի կարիքներին: Տարբեր աղբյուրներից ստացված տվյալների և ինդիկատորների ուսումնասիրությունը թույլ կտա գնահատել առկա իրավիճակը, համեմատական տանել հաջողված փորձի հետ:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԱՏԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ԸՆՏՐԱՆՔԸ.

Հետազոտության նպատակին և խնդիրներին հասնելու համար կիրառվել են որակական և քանակական հետազոտության տեղեկատվության ստացման հետևյալ մեթոդները.

Փաստաթղթերի վերլուծություն.

Իրականացվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ոլորտում կանխարգելման և խնամքի ծառայություններ տրամադրող ՀԿ-ների և ծառայություններից օգտվող շահառուների հետ (քանակական տվյալները կհստակեցվեն հետազոտության դաշտային աշխատանքերին զուգահեռ, ըստ անհրաժեշտության):


Փաստաթղթերի վերլուծություն.

Իրականացվել է 2014, 2016, 2018 և 2021թթ. ԻԿՎՀ հետազոտության արդյունքների, ԻՀԱԿ ՓԲԸ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տվյալների բազաների, ինչպես նաև ՀՀ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պետական նպատակային ծրագրի ուսումնասիրություն: Փաստաթղթերի վերլուծության նպատակահարմարությունը տվյալ հետազոտությունում պայմանավորված է նրանով, որ այն հանդիսանում է հավաստի, ստուգելի և օբյեկտիվ ուսումնասիրության եղանակ, և դրա կիրառման դեպքում հնարավոր է ստանալ սույն հետազոտության խնդիրներին բավարարող ամբողջական տեղեկատվություն: Այն հնարավորություն է տալիս բացահայտել հետազոտությանը վերաբերող տարբեր ամբողջականությամբ տեղեկատվության կայուն, բովանդակային նյութը և հիմնավորված կոնտեքստը:

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ համաճարակի միտումները և ՄԻԱՎ/ՁԻԱՀ իրավիճակը

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում, 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի դեպքերի արձանագրումը սկսվել է 1988 թվականից: Մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 4579 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, ներառյալ երեխաների շրջանում արձանագրված ՄԻԱՎ վարակի 74 դեպք: Գրանցված դեպքերի գերակշիռ մասը արական սեռի ներկայացուցիչներ են՝ կազմելով ընդհանուր դեպքերի շուրջ 69%-ը:



Գծապատկեր 1. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերի բաշխումն՝ ըստ գրանցման տարիների (1988-2021թթ.)


ՄԻԱՎ վարակ ունեցողներից 2218-ի մոտ ախտորոշվել է ՁԻԱՀ (գրանցված դեպքերի 48,4%), որից 42-ը երեխա են:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հանրապետությունում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմում է 4,850:


ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերը՝ ըստ գրանցման տարիների

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի դեպքերի արձանագրումը սկսվել է 1988 թվականից: Մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 4579 դեպք ՀՀ քաղաքացիների

շրջանում, ներառյալ երեխաների շրջանում արձանագրված ՄԻԱՎ վարակի 74 դեպք: Գրանցված դեպքերի գերակշիռ մասը արական սեռի ներկայացուցիչներ են՝ կազմելով ընդհանուր դեպքերի շուրջ 69%-ը:




Գծապատկեր 2-ում ներկայացված է ՀՀ-ում արձանագրված ՄԻԱՎ վարակի դեպքերն՝ ըստ տարեթվերի:



Գծապատկեր 3. ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումն ըստ սեռի և տարիքային խմբերի (1988-2021թթ.)

ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումն ըստ սեռի ցույց է տալիս, որ ՄԻԱՎ վարակ ունեցողների ընդհանուր կազմում գերակշռողն արական սեռի ներկայացուցիչներն են՝ 69%, իգական սեռի ներկայացուցիչները կազմում են 31%, իսկ ՁԻԱՀ դեպքերի համամասնությունն՝ ըստ սեռային բաշխվածության հետևյալն է. արական՝ 74%, իգական՝ 26% (գծապատկեր 4):


ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումն՝ ըստ տարիքային խմբերի և սեռի, ցույց է տալիս, որ ՄԻԱՎ հայտնաբերված դեպքերի մոտ կեսը՝ 49,6%-ը 25-39 տարիքային խմբում է, այսինքն՝ ակտիվ վերարտադրողական հասակում (գծապատկեր 3):



Գծապատկեր 4. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեպքերն ըստ սեռի, ընդամենի նկատմամբ, % (1988-2021թթ.)

Գրանցվել է մահվան 1033 դեպք, որից 759-ը՝ ՁԻԱՀ-ով հիվանդների շրջանում: Մահացածների թվում կա 12 երեխա: Մահերի բաշխումն, ըստ գրանցման տարիների, ունի հետևյալ տեսքը (գծապատկեր 1):

ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերն ըստ փոխանցման ուղիների ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի վերլուծությունն, ըստ փոխանցման ուղիների, ցույց է տալիս, որ ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղիներն են՝ հետերոսեքսուալ ճանապարհը (74,1%), թմրամիջոցների ներարկային օգտագործումը (17,1%), հոմոսեքսուալ ճանապարհով վարակումը (5,7%): Արձանագրվել են թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը (5%), կոմերցիոն սեռական ծառայություն տրամադրողների միջոցով (7%) (Տե՛ս գծապատկեր 10):





Գծապատկեր 5. 1988-2021թթ-ի ՄԻԱՎ հաստատված դեպքերը ըստ փոխանցման ուղիների, %

ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի վերլուծությունը՝ ըստ փոխանցման ուղիների, ցույց է տալիս, որ ՀՀ-ում ՄԻԱՎ-ի փոխանցման հիմնական ուղիներն են հետերոսեքսուալ ճանապարհը և թմրամիջոցների ներարկային օգտագործումը: Սակայն վերջին 5 տարիներին հայտնաբերված ՄԻԱՎ դեպքերի փոխանցման ուղիների ուսումնասիրությունը վկայում է, որ աճ է գրանցվել հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման դեպքերի շրջանում, և այն ներկայումս հաջորդում է հետերոսեքսուալ ճանապարհին:


Գծապատկեր 6. 2017-2021թթ. ՄԻԱՎ հաստատված դեպքերը ըստ փոխանցման ուղիների, %

ՄԻԱՎ-ի տարածման կանխարգելման և վաղ հայտնաբերմանն ուղղված ծրագրային ցուցանիշներից մեկն է հանդիսանում նաև հայտնաբերված դեպքերի վարակման վաղեմությունը: Ստորև ներկայացված է վերջին 3 տարիների ընթացքում գրանցված ՄԻԱՎ-ի դեպքերի և յուրաքանչյուր խմբում ՁԻԱՀ-ի դեպքերի համամասնությունը:




Գծապատկեր 7. Ներկայացված է 2019թ. հայտնաբերված դեպքերի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համամասնությունը

Արձանագրված ՄԻԱՎ դեպքերի և ՁԻԱՀ համամասնությունն ըստ խմբերի, 2020թ.



Գծապատկեր 8. Ներկայացված է 2020թ. հայտնաբերված դեպքերի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համամասնությունը

Արձանագրված ՄԻԱՎ դեպքերի և ՁԻԱՀ համամասնությունն ըստ խմբերի, 2021թ.



Գծապատկեր 9. Ներկայացված է 2021թ. հայտնաբերված դեպքերի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համամասնությունը

Հայտնաբերված ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի դեպքերն ըստ խմբերի լավագույն ցուցիչն է հանդիսանում վաղ հայտնաբերելիության ցուցանիշի:

Վերջին 3 տարիների հայտնաբերված դեպքերի մեջ ակնհայտ է, որ SUS-ների շրջանում վաղ հայտնաբերելիության ցուցանիշը լավագույնն է և ՁԻԱՀ-ի փուլում հայտնաբերված դեպքերի նվազում է դիտվում:

Մյուս խմբերի պարագայում ևս վաղ հայտնաբերելիության ցուցանիշի դրական դինամիկան նկատելի է:

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԱՐԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ, ԿՈՄԵՐՑԻՈՆ ՍԵՌՎԻՍ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱՆԱՑ, ՏՂԱՄԱՐԴՈՒ ՀԵՏ ՍԵՌՎԻՍ ԿԱՊԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՉԱՓԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԻԿՎՀ հետազոտության նպատակն է չորս հիմնական խմբերում՝ Երևանում, Գյումրիում և Վանաձորում ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, ՏՍՏ-ների շրջանում և Երևանում ՏԳ-ների շրջանում գնահատել ՄԻԱՎ-ի տարածվածությունը և սեռական կամ ներարկային ճանապարհով դրա փոխանցման ռիսկային վարքագիծը: ԻԿՎՀ-ի շրջանակներում գնահատվել է նաև հիմնական խմբերի չափերը և որոշվել խմբերում ծրագրերի ծածկույթը, ՄԻԱՎ-ի կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության ծածկույթը և այլն:

ՄԻԱՎ-ի տարածվածությունը

Ստորև ներկայացված է Հայաստանի 3 քաղաքներում ՄԻԱՎ-ի տարածվածությունը հիմնական խմբերի շրջանում:

Աղյուսակ 1. ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, ՏՍՏ-ների և ՏԳ-ների շրջանում

Խումբ	2018թ.			2021թ.		
	Երևան	Գյումրի	Վանաձոր	Երևան	Գյումրի	Վանաձոր
ԹՆՕ	2,2%	0,5%	0,4%	2,5%	6,0%	2,2%
ԿՍԿ	0,6%	0,0%	0,0%	0,1%	0,9%	2,4%
ՏՍՏ	2,7%	1,3%	0,3%	1,9%	1,9%	0,0%
ՏԳ	2,0%	–	–	2,5%	–	–

Ինչպես երևում է աղյուսակում, բոլոր խմբերի դեպքում ՄԻԱՎ-ի տարածվածության աճ է դիտվում՝ բացառությամբ Երևան քաղաքում ԿՍԿ-ների շրջանում: Այսպիսով, կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

- ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԹՆՕ-ների շրջանում Երևանում 2.5% է, Գյումրիում՝ 6.0% և Վանաձորում՝ 2.2%:
- Երևանում և Գյումրիում ԿՍԿ-ների ավելի քիչ, քան 1%-ը, իսկ Վանաձորում՝ 2.4%-ը ունեցել է ՄԻԱՎ-ի հետազոտության դրական արդյունք:
- ՄԻԱՎ-ի տարածվածությունը ՏՍՏ-ների շրջանում Երևանում կազմել է 5.2%, Գյումրիում՝ 1.9%, իսկ Վանաձորում դեպք չի հայտնաբերվել:
- ՏԳ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածությունը 2.5% է:

Խոցելի խմբերի շրջանում ՄԻԱՎ վարակի տարածվածության միտումները

2012թ.-ից 2016թ. կտրուկ նվազման միտումից հետո ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը փոքր-ինչ աճել է 2016 թ.-ից՝ 0.5%-ից 2021թ.-ին հասնելով մինչև 2.6%: (2018՝ 2.2%)

ՄԻԱՎ-ի տարածվածությունը ԿՍԿ-ների շրջանում նույնական է նախորդ տարիների արդյունքներին՝ 0.2%: (2018՝ 0.6%)

ՏՍՏ-ների շրջանում նկատվում է ՄԻԱՎ-ի տարածվածության աճ՝ 2021 թվականին հասնելով 5.0%-ի՝ 2018 թվականի 2.7%-ի և 2016 թվականի 0.8%-ի համեմատ:

Խոցելի խմբեր	Խմբի չափ	
	2018 թ.	2021թ.
ԿՍԿ	4 600	8140
ԹՆՕ	9 005	14110
ՏՍՏ	16 100	22716
ՏԱ	150	1015

Խմբի չափեր

Ստորև (Աղյուսակ 2-ում) ներկայացված է 2018թ. և 2021թ. ԻԿՎՀ հետազոտության շրջանակում ԱՎԵԽ-ների (ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, ՏՍՏ-ների և ՏԳ-ների) խմբերի չափերը:
Աղյուսակ 2. ԹՆՕ-ների, ԿՍԿ-ների, ՏՍՏ-ների և ՏԳ-ների խմբի չափեր (2018, 2021թթ.)


Բոլոր չորս խմբերի շրջանում դիտվել է խմբերի չափի և ՄԻԱՎ-ի տարածվածության աճ, վերջիններս հիմք են հանդիսանում ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերի ընդլայնման: Այն թույլ կտա բարելավել ծառայությունների հասանելիության մակարդակը և կնպաստի ՄԻԱՎ-ի վաղ հայտնաբերելիության աճին:

Բուժման կասկադ ԱՎԵԽ-ների շրջանում

ՀՌՎ բուժման մասշտաբն ընդլայնելու համար ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համատեղ ծրագիրը (UNAIDS) հրապարակել է «95-95-95» թիրախները ՄԻԱՎ-ի «բուժման կասկադի» համար: Այս թիրախները նշում են, որ մինչև 2030 թվականը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց 95%-ը պետք է իմանա իր ՄԻԱՎ կարգավիճակը, ախտորոշված ՄԻԱՎ վարակով մարդկանց 95%-ը ստանա ՀՌՎ բուժում, իսկ բուժվողների 95%-ը կհասնի վիրուսի ճնշման:


Ըստ տարիների՝ ԱՎԵԽ-ների շրջանում բուժման կասկադը հաշվարկելու համար՝ ուսումնասիրվել են 2014, 2016, 2018 և 2021թթ. կատարված ԻԿՎՀ հետազոտության արդյունքները, այնուհետև դրանք համադրվել են ԻՀԱԿ-ի տվյալների բազաների հետ: Անհրաժեշտ է նշել, որ որոշ դեպքերում տվյալների բացակայության նաև տվյալների անհամեմատելի լինելու պատճառով բուժման կասկադ հնարավոր է եղել հաշվարկել 2018թ. և 2021թ. ԻԿՎՀ հետազոտության արդյունքների հիման վրա:

Բուժման կասկադ, 2019թ.




Գծապատկեր 10. Բուժման կասկադը ԱՎԵԽ-ների շրջանում, 2019թ. (ԻԿՎՀ 2018թ.)

Բուժման կասկադ, 2020թ.



Գծապատկեր 11. Բուժման կասկադը ԱՎԵԽ-ների շրջանում, 2020թ. (ԻԿՎՀ 2018թ.)

Բուժման կասկադ, 2021թ.




Գծապատկեր 12. Բուժման կասկադը ԱՎԵԽ-ների շրջանում, 2020թ. (ԻԿՎՀ 2021թ.)

Բուժման կասկադի առաջին թիրախը ՄԻԱՎ-ով ապրողներն են, որոնք գիտեն իրենց կարգավիճակը: Բուժման կասկադի 1-ին 95-ի հաշվարկը կատարվել է հետազոտության արդյունքում ստացված խմբի չափի և տարածվածության ցուցանիշների համադրելու արդյունքում՝ յուրաքանչյուր խմբի համար ՄԻԱՎ-ով ապրողների հաշվարկային թիվ ստանալու միջոցով: Հետագայում արդեն համադրելով ԻՀԱԿ-ի բազաների հետ ամբողջացվել են բուժման կասկադի մյուս թիրախները: Բուժման կասկադի պատկերն ըստ խմբերի մեզ թույլ է տալիս գնահատել ՄԻԱՎ-ի հայտնաբերելիության, ինչպես նաև բուժման կցման և բուժման անընդհատության իրավիճակը:

1. 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՄԻԱՎ-ով ապրողների թիվը կազմում է 3546:
2. Բուժում է ստանում 2633 ՀՀ քաղաքացի և 46 օտարերկրացի:
3. ՎԾ հետազոտություն է անցել 1557 անձ, որից 1117-ի մոտ գրանցվել է չհայտնաբերվող մակարդակ:

Ստորև հաշվարկված է ՀՀ քաղաքացիների շրջանում բուժման կասկադը (Գծապատկեր 13):

Բուժման կասկադ ,2021թ.



Գծապատկեր 13. Բուժման կասկադը, 2020թ. (ՄԻԱՎ-ով ապրողների հաշվարկային թիվը 4,850)

ԻԿՎՀ արդյունքում բացահայտված խնդիրները

- ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության հասանելիությունը պետք է ավելի ընդլայնվի խմբերի շրջանում՝ ՄԻԱՎ-ի բուժման կասկադի թիրախներին հասնելու համար:
- Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների ծառայություններից ԿՍԿ-ները ոչ միշտ են օգտվում, ուստի պետք է աշխատանքներ տանել՝ խմբերին ծառայությունների հասանելիություն ապահովելու և ընդգրկվածության մակարդակը բարձրացնելու համար:
- Նույն խնդիրն առկա է նաև SUS-ների շրջանում, այս պարագայում պետք է բարելավման աշխատանքներ տանել թեստավորման ընդգրկվածությունը բարձրացնելու ուղղությամբ, ինչը կարող է նաև բերել խարանի և խտրականության նվազեցման, հետազոտման կետերի ընդլայնման և այլն:
- ՄԻԱՎ վարակի փոխանցման ուղիներն իմացող ԹՆՕ-ների տոկոսը (ՄԻԱՎ-ի վերաբերյալ գիտելիքների համակցված ցուցիչ) 2014թ.-ի 64.4%-ից կայուն նվազել է մինչև 19.6%-ը 2021թ.-ին: (2018՝ 39.7%)
- ՄԻԱՎ վարակի փոխանցման ուղիները ճիշտ նշած ԿՍԿ-ների տոկոսը (ՄԻԱՎ-ի վերաբերյալ գիտելիքների համակցված ցուցիչ) 2012թ.-ի 64.2%-ից 2021թ.-ին կայուն նվազել է մինչև 32.0%-ը: (2018՝ 40%)
- SUS-ների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ գիտելիքների համակցված ցուցիչը կայուն նվազում է 2014 թվականից ի վեր, երբ այն կազմում էր 79.1%, և 2021 թվականին այն ընդամենը 29.1% է կազմել: (2018՝ 48.4%)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ԻՆ ՀԱԿԱԶԴԻՄԱՆ 2022-2026ԹԹ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման առաջին ծրագիրը մշակվել է 2002-2006 թվականների համար: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրի շարունակականության, տրամադրվող ծառայությունների անընդհատության ապահովման և դոնորական միջոցների ներգրավման նպատակով 2021թ. մշակվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման 2022-2026թթ. միջոցառումների ծրագիրը:

Իրականացվել է ԱՌԾ-ի վերլուծություն և առանձնացվել է հիմնական նպատակներն ու թիրախները, որոնք ներկայացված են ստորև.

- ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի նվազեցում 90%-ով 2010թ.-ից,
- ՁԻԱՀ-ով պայմանավորված մահվան դեպքերի 75% կրճատում 2010թ.-ից,
- 95-95-95% ՄԻԱՎ վարակի ախտորոշում, բուժում և վիրուսային ծանրաբեռնվածության մակարդակի նվազեցում չափահասների ու երեխաների շրջանում,
- 10% ախտորոշում հիվանդության ուշ փուլում,
- ՄԻԱՎ վարակի ռիսկի խմբի անձանց 95%-ն օգտվում է համակցված վարակի կանխարգելման միջոցներից,
- Վարակի ուղղահայաց փոխանցման վերացման ծառայությունների 95% ծածկույթ,
- ՄԻԱՎ-ով ապրող և ՏԲ ունեցող անձանց 95%-ը ստանում է ՏԲ կանխարգելիչ բուժում,
- ՄԻԱՎ-ով ապրող և ռիսկի խմբում գտնվող անձանց 90%-ն օգտվում է այլ ինտեգրված առողջապահական ծառայություններից,
- Խարանի և խտրականության դրսևորումների հետ բախվող ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և առավել վտանգի ենթարկվող խմբերը 10%-ից քիչ են կազմում,
- Երկրներում չեն գործում պատժիչ օրենքներ և քաղաքականություններ:
- Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը՝ ուշադրությունը կենտրոնացնելով բնակչության առավել վտանգի ենթարկվող և ավելի խոցելի խմբերի վրա:
- Մեծացնել ՄԻԱՎ վարակով ապրող այն մարդկանց թիվը, ովքեր գիտեն իրենց կարգավիճակի մասին:
- Մեծացնել ա) իրենց ՄԻԱՎ դրական կարգավիճակի մասին տեղյակ և ՀՌՎ բուժում ստացող անձանց տոկոսը և բ) ՀՌՎ բուժում ստացող այն մարդկանց տոկոսը, ում մոտ առկա է վիրուսային ծանրաբեռնվածության մակարդակի նվազում:

- Քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց մասով սա ներառում է միասնական ռազմավարության մշակում մինչ ԲԿՀ-ից ազատումը և ազատումից հետո ՄԻԱՎ վարակի, ՏԲ-ի և հեպատիտ Ց-ի առնչությամբ միջոցառումների վերաբերյալ: Եվ՝ ՄԻԱՎ վարակի, և՛ ՏԲ ծրագրերում ներառված են աշխատանքային միգրանտների շրջանում հետազոտությունների անցկացման և բուժման հատուկ ռազմավարություններ:
- ՏԲ/ՄԻԱՎ համակցված վարակների բուժումը: Այն ներառում է ՏԲ կանխարգելիչ բուժումը ՄԻԱՎ դրական անձանց շրջանում, ՏԲ-ին, ՄԻԱՎ վարակին և հեպատիտ Ց-ին առնչվող ծառայություններ տրամադրող բուժհաստատությունների կողմից համատեղ պլանավորման իրականացումը, ինչպես նաև մոնիտորինգի և գնահատման համակարգերի և ծրագրային տվյալների կանոնավոր վերլուծությունների ինտեգրման մեծացումը:
- Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման և վնասի նվազեցման ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը:
- Ընդլայնել նախակոնտակտային կանխարգելման (ՆԿԿ) հասանելիությունը ԱՎԵԽ-ների համար:
- Ամրապնդել ՄԻԱՎ/ՁԻԱՀ խնամքի ծառայությունների մատուցումը, համապարփակությունը և որակը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար:
- Ամրապնդել ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծառայությունների և ծրագրերի մատուցումը, համապարփակությունը և որակը լայն հասարակության և այլ ավելի խոցելի խմբերի, այդ թվում՝ աշխատանքային միգրանտների համար:

ՀՀ-ում ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծառայությունները, ներառյալ նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելման ծառայությունները, ՄԻԱՎ-ի բուժմանն ուղղված ծառայությունները, թիրախ խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելման և բուժման ծառայությունների միջազգային հաջողված փորձը

ՀՀ-ում ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ուղղված ծառայությունների, ներառյալ՝ նախակոնտակտային և հետկոնտակտային կանխարգելումների և ՀՌՎ բուժման վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալու համար, ուսումնասիրվել է գործող ուղեցույցերն ու ԳՍԸ-ները, բուժառուների և շահառուների դիտարկումները:

- 2021թ.-ին ԻՀԱԿ-ի կողմից վերանայվել է ՆԿԿ-և ՀԿԿ-ի ԳՍԸ-ները, որոնք միտված են ժամանակին համահունչ հասանելի և մատչելի ծառայությունների տրամադրելուն:
- ՄԻԱՎ-ի կանխարգելման և բուժման ծառայությունները մատչելի են, սակայն երբեմն անհասանելի աշխարհագրորեն, քայլեր է պետք ձեռնարկել ՀՌՎ դեղերի ապակենտրոնացված տրամադրման համար: Ներկայումս ծառայությունը հասանելի է Շիրակի և Լոռու մարզերում: Բուժառուների համար ավելի մոտ ու հասանելի պայմաններում դեղորայքի տրամադրումը արդյունավետ միջոց կլինի պայքարելու բուժման դադարների դեմ:

ՆԿԿ-ի թիրախներ

- ՆԿԿ-ի թիրախներ պետք է համարել հետևյալ խմբերը և առաջարկել ՆԿԿ՝ բնակչության խոցելի խմբերին (SUS, SԳ, ԿՍԿ, ԹՆՕ)
- շճադիսկորդանտ զույգերի ՄԻԱՎ բացասական զուգընկերոջը մինչև ՄԻԱՎ. Կարևոր դերը ՆԿԿ-ի ընդլայնման մեջ դրա մասին գրագետ տեղեկատվության տրամադրում է, ինչը կօգնի շահառուներին զերծ մնալ ոչ միայն ՄԻԱՎ-ից այլ նաև սեռավարակներից, հեպատիտներից ևս:

Իրավիճակի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ տարիների ընթացքում ՄԻԱՎ-ի կանխարգելմանն ու վաղ հայտնաբերման ծրագրերը ԱՎԵԽ-ների շրջանում դրական ազդեցություն ունեն ՄԻԱՎ/ՁԻԱՀ իրավիճակի վրա:

ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հրավիճակի բարելավման միտված առաջարկներ .

- Թեստավորումների ծավալների մեծացում ԱՎԵԽ-ների շրջանում,
- Ինքնաթեստավորման հնարավորություն ստեղծել այն անձանց շրջանում, որոնք ունեն բավարար գիտելիքներ ՄԻԱՎ-ի վերաբերյալ և կարող են իրականացնել ինքնաթեստավորում
- Իրազեկման հանդիպումների իրականացում ՆԿԿ, ՀԿԿ-ի վերաբերյալ,
- ՀԿԿ-ի թիրախների առաջին դեղաչափի հնարավորինս վաղ ստացում
- Սոցիալական գովազդների տարածում համացանցում,
- ՀՌՎ բուժման աշխարհագրական հասանելիության ապահովում, հետազայում նաև այլ ծառայությունների մատուցման ապակենտրոնացում:



ngngo@ngngo.net
www.ngngo.net



+374 60478989
+374 55478980

© 2023. The Report was published by New Generation Humanitarian NGO
© 2023. Designed by New Generation Humanitarian NGO

